

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ**

Արթուր ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Արցախի պետական համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. հարկեր, տնտեսական աճ, հարկային քաղաքականություն

Ազատական տնտեսական հարաբերություններին անցումն ենթադրում է բազմաթիվ հիմնախնդիրների լուծում, որի դեպքում միայն հնարավոր կլինի ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման համար: Որպես այդպիսիք են հանդիսանում երկրի ֆինանսական, դրամավարկային, բանկային, հարկաբյուջետային, սոցիալական և այլ համակարգերում արմատական վերափոխումների իրականացումը: Ընդ որում, այդ գործընթացի իրականացման հիմնական կողմնորոշիչ պետք է դառնա նոր պահանջների բավարարումը, որոնք հաճախ կարող են տրամադժորեն տարբերվել կենտրոնացված կառավարման համակարգի կողմից ներկայացվող պահանջներից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ վարվող քաղաքականությունն անցման սկզբնական փուլերում պետք է բացառի կտրուկ և հեղափոխական քայլերի իրականացումը, քանի որ վերջինս, որպես կանոն, չի հանգեցնում ցանկալի արդյունքների, այլ ավելի է խորացնում առկա հիմնահարցերը և ծնում նորերը: Այդ իսկ պատճառով, տնտեսական նոր հարաբերություններին անցումը պետք է իրականացվի համապատասխան նախադրյալների ստեղծման, պետական միջամտության շրջանակների աստիճանաբար նեղացման, շուկայական հարաբերությունների ձևավորման համար բարենպաստ դաշտի ընդլայնման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման ճանապարհով:

Ընդհանուր տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործում խիստ կարևորվում է այնպիսի հիմնախնդիրների լուծմանն ուղղված մոտեցումների մշակումը, ինչպիսիք են տնտեսական ազատ միջավայրի ձևավորման, մրցակցության հաստատման, սոցիալական ապահովության համակարգի ստեղծման, ներդրումային գրավչության բարձրացման, հարկային բեռի հավասարաչափ բաշխման, բյուջետային գերակայությունների սահմանման հարցերը: Բնականաբար, դրանցից յուրաքանչյուրի լուծման հարցում առանցքային է պետությանը դերը, որն իր տրամադրության տակ ունեցած լծակներով կարող է համապատասխան փոփոխու-

թյուններ կատարելու ճանապարհով ստեղծել առավել նպաստավոր պայմաններ:

Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, տարաբնույթ խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր դեր ունի երկրի հարկային համակարգը: Դա, բնականաբար, ենթադրում է հարկային այնպիսի քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի ձեռնարկատիրական ակտիվության բարձրացմանը, ներդրումային գործընթացի աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը, և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը: Այն պետք է առավել բարենպաստ պայմաններ ստեղծի երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Այլ խոսքով, նշված նպատակների համախումբը իրենից ներկայացնում է պետական կառավարման այն ամբողջությունը, որի համակարգված և հետևողական իրականացման արդյունքում միայն կարելի է ապահովել պետական կարգավորման կարևոր լծակների գործադրման նպատակամետությունն ու արդյունավետությունը:

Տնտեսական գործունեության համար հարկային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկման օբյեկտների ու սուբյեկտների սահմանման, հարկերի դրույքաչափերի, դրանց կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումն, ըստ էության, երկրում արդյունավետ հարկային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են:

Հարկային համակարգը որպես կարգավորման գործիք դիտարկելիս հարկ է նշել դրա նշանակությունն ինչպես պետության համար՝ բյուջեի եկամուտների համալրման մասով, այնպես էլ իբրև զարգացման տնտեսական և սոցիալական ոլորտների վրա ազդող ֆինանսական կատեգորիա, որը համակարգում է դրանք պահանջվող համամասնություններով՝ պետության կայուն զարգացման և ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու համար: Հարկերը պետք է խրախուսեն տնտեսական աճը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, բարելավեն արտադրության որակը, շուկայական մեխանիզմի գործունեության առումով կրեն հիմնական բեռը:

Ցանկացած պետության հարկային համակարգը մեծապես որոշվում է երկրի զարգացման ազգային, պատմական և տնտեսական պայմաններով, հետևաբար՝ դրանց գնահատման համար առավել չափօրինակ բնութագրեր առանձնացնելը գործնականում բավական բարդ է:

Հարկը հասարակության իրական կյանքի բարդ, բազմակողմ երևույթ է, որն իրենում կենտրոնացնում է տնտեսական ու սոցիալ-քաղաքական հարաբերություններ: Սակայն հարկի էության ճանաչման հարցում որոշիչը դրա տնտեսական բաղադրիչն է, և այն պետք է քննարկել որպես տնտեսական կարևոր կատեգորիա և հատկապես որպես արժեքի շարժում դրանց ստեղծող սուբյեկտներից դեպի պետություն, քանի որ հարկի տնտեսագիտական բովանդակությունն արտահայտվում է հարկատուների և պետության փոխհարաբերություններում, որոնցում էլ հենց դրսևորվում են հարկերի գործառնությունները:

Հասարակության գոյության վերջին երկու հազարամյակների ընթացքում հարկերը մշտապես համարվել են հասարակության տարբեր խավերի բուռն քննարկումների առարկա, շատ հաճախ հարկերի ցանկացած փոփոխություն վեր է ածվում քաղաքական պայքարի, զանգվածային լրատվամիջոցների սուր քննադատությունների առանցքի: Այսպիսի ուշադրությունը արդարացված է քանզի հարկերը.

- նվազեցնում են հարկատուների եկամուտները,
- հանդիսանում են պետության եկամտի հիմնական աղբյուրը,
- համարվում են շուկայական տնտեսության կարգավորման արդյունավետ գործիք:

Հարկերի էության արդի մեկնաբանությունները թույլ են տալիս բացահայտել դրանց մի շարք բնութագրական գծեր, որոնք էլ հարկերն առանձնացնում են ֆինանսական այլ վճարներից: Այդ առանձնահատուկ գծերն են.

1. պարտադիր բնույթը,
2. օրինական բնույթը,
3. ոչ համարժեքությունը,
4. նպատակային բնույթը:

Պարտադիր բնույթը: Ցանկացած հարկ նվազեցնում է եկամուտը: Դժվար թե գտնվի անձ կամ կազմակերպություն, որը հարկերը վճարի ոգևորությամբ և խորին բավականության զգացումով: Ժամանակակից հասարակությունում հարկերը «տխուր» անհրաժեշտություն են: Որոշ հարկ վճարողներ կարող են ըմբռնել դրա անհրաժեշտությունը, մյուսները հարկերի մեջ տեսնում են միայն չարիք: Սակայն անկախ հարկի նկատմամբ ունեցած սուբյեկտիվ տեսակետից, բոլորը պետք է դրանք վճարեն պարտադիր կարգով: Հարկերը պարտադիր վճար են: Քաղաքակիրթ հասարակությունում հարկերի վճարումը վեր է ածվում անխուսափելիության:

Օրինական բնույթը: Հարկերը օրինական վճարներ են: Դրանք մտցվում են և գանձվում ոչ թե միապետի, նախարարի կամ կառավարության ցան-

կուրսանք, այլ օրենսդրական ակտերով: Հարկերը ընդունվում և չեղյալ են համարվում միայն համապատասխան օրենքներով: Հարկի օրինական բնույթը հենց այն տարբերակիչ գիծն է, որով այն առանձնացվում է ֆինանսական այլ վճարներից (օրինակ, ԽՍՀՄ-ում գոյություն ունեցած շահույթի վճարումները): Միայն օրենքն է որոշում, թե ով է պարտավոր վճարել տվյալ հարկը, ինչ դրույքաչափով և ինչպիսի ժամկետներում:

Ոչ համարժեք բնույթ: Հարկերը երկակի բնույթ ունեն. հարկատուի տեսանկյունից հարկերն, անկասկած, համարժեք չեն, իսկ հասարակության տեսանկյունից հարկերը կրում են երկակի բնույթ: Հարկային մուտքերով ձևավորված բյուջեի եկամուտները օգտագործվում են պետական ծախսերի ֆինանսավորման համար, որոնք բացառապես պետք է ուղղվեն բացառապես հասարակության բարեկեցությանը և կարիքներին: Եթե քաղաքացիները գտնում են, որ պետությունը վատ է կատարում իր գործառույթները, նրանք հարկերը վճարում են դժկամությամբ: Պետության տնտեսական, սոցիալական և այլ քաղաքականությունների իրականացումը հարկ վճարողի աջակցությունը մեծ նշանակություն ունի բարոյական մթնոլորտի ձևավորման համար և անմիջականորեն ազդում է հարկերի հավաքելիության մակարդակին:

Նպատակային բնույթ: Հարկի նպատակային բնույթը արտահայտվում է պետության և տեղական մարմինների պահանջների դրամական ռեսուրսներով բավարարման մեջ, որոնք ուղղվում են բոլոր մակարդակի բյուջեներով նախատեսված միջոցառումների ֆինանսավորմանը:

Հարկերի միջոցով կատարվում է հասարակության համախառն արտադրանքի վերաբաշխում դրա ռեալ արտադրողի և պետության միջև: Հաշվի առնելով արդի տնտեսության բարդությունը՝ աշխատանքի հասարակական բաժանման մակարդակը և կիրառվող հարկերի տարատեսակները, կարելի է եզրակացնել, որ հարկերի միջոցով իրականացվում է ՀՆԱ-ի վերաբաշխումը, որի հիմնական նպատակը պետական բյուջեի եկամտային մասի ձևավորումն է: Ընդհանրացնելով կարելի է նշել, որ հարկերը իրենց էությամբ պետության և հարկ վճարողի միջև ծագող հարաբերությունների ամբողջությունն են՝ ՀՆԱ-ի վերաբաշխման և պետության կենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման նպատակով: Ցանկացած տնտեսական երևույթ ունի իր դրսևորման արտաքին ձևը: Հարկերի տնտեսական էությունը այդ հարաբերությունների կողմերի տեսանկյունից տարբեր է: Պետության տեսանկյունից հարկերը ներկայանում են պետության դրամական եկամուտների ձևով, հարկատուի տեսանկյունից՝ նրա սեփական եկամուտների մի մասի զանձում են, ըստ որում դրանք դրսևորվում են հարկադիր և ոչ համարժեք բնույթով: Բնական է, որ հարկային հարաբերությունների մասնակիցների միջև ծագում է օբյեկտիվ հակասություն: Եթե պետությունը շահագրգռված է

հարկերի աճով, ապա հարկատուները՝ իրենց եկամտի մաքսիմալացման նպատակով, ցանկանում են վճարել ցածր հարկեր: Հարկատուների փաստացի վճարունակության հաշվառման անհրաժեշտությունը մի կողմից, հասարակության անդամների կոլեկտիվ պահանջները մյուս կողմից արտահայտվում են հարկման հիմնական չափանիշներում, որոնք սահմանվում են որպես

- արդարություն,
- արդյունավետություն,
- պարզություն:

Հարկման արդարությունը պահանջում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնց դեպքում բարձր եկամուտներով և վճարունակ հարկատուներն իրականում կվճարեն բարձր հարկեր: Արդարությունը ներկայանում է ուղղահայաց և հորիզոնական տարատեսակներով: Ուղղահայացը ենթադրում է, որ հարկը գանձվում է կոնկրետ անձի նյութական հնարավորությանը համապատասխան, և եկամտի աճին զուգահեռ հարկի դրույքաչափը կարող է աճել: Հորիզոնականը նշանակում է անկախ եկամտի ստացման աղբյուրից միատեսակ եկամուտներով անձանց նկատմամբ նույն հարկադրույքի կիրառում:

Հարկման արդյունավետությունը ենթադրում է, որ հարկային համակարգը պետք է այնպես կառուցվի, որպեսզի նպաստի արդարության ապահովմանն ու տնտեսական աճին:

Հարկման պարզությունն արտահայտվում է հարկ վճարողների լայն շրջանակների համար հարկերի հաշվարկման և հարկային մարմիններ ներկայացվող զանազան հարկային հաշվարկների լրացման մատչելիության, ինչպես նաև հարկային օրենսդրության կայունության և պետության տարածքում հարկային կանոնների ու հարկային պատասխանատվության նորմերի միասնականության մեջ: Հարկերի էությունը որոշվում է նրանով, թե դրանք ինչ տեղ են գրավում արտադրական հարաբերությունների համակարգում: Հարկի վճարման աղբյուրը նոր ստեղծված արժեքն է՝ ազգային եկամուտը, որը ստանում է դրսևորման առանձնահատուկ ձևեր՝ աշխատավարձ, շահույթ, ռենտա, տոկոս: Այս սկզբնական բաշխումը լրացվում է վերաբաշխմամբ, որտեղ էլ ձևավորվում են հարկերը:

Այսպիսով, հարկերը հասարակության մեջ ստեղծված զուտ եկամտի մի մասի՝ պետության կողմից իրացման կարևոր ֆինանսական ձևեր են, իսկ պետությունն իր եկամուտների այդ մասը օգտագործում է քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործառնությունների իրականացման համար:

Արթուր ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**Հարկային համակարգի ձևավորման և հարկային քաղաքականության
իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքերը**

Բանալի բառեր. հարկեր, տնտեսական աճ, հարկային քաղաքականություն

Հոդվածը նվիրված է հարկերի տեսական հիմքերի և տնտեսական բովանդակության ուսումնասիրությանը: Դիտարկվել են հարկերին բնորոշ հիմնական առանձնահատկությունները և հարկային համակարգի ձևավորման սկզբունքային մոտեցումները: Ներկայացվել է հարկային համակարգի դերը երկրի տնտեսական զարգացման և սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում: Հարկի վճարման աղբյուրը նոր ստեղծված արժեքն է՝ ազգային եկամուտը, որը ստանում է դրսևորման առանձնահատուկ ձևեր՝ աշխատավարձ, շահույթ, ռենտա, տոկոս: Այս սկզբնական բաշխումը լրացվում է վերաբաշխմամբ, որտեղ էլ ձևավորվում են հարկերը:

Артур ТАДЕВОСЯН

Теоретические и методологические основы формирования налоговой системы и реализации налоговой политики

Ключевые слова: налоги, экономический рост, налоговая политика

Налог как экономическая и правовая категория всегда выражал обязательный платеж, во-первых, установленный государством в принудительном порядке, и взимаемый, во-вторых, в пользу этого государства: нет государства - не может быть и налога; любой обязательный платеж, не установленный государством и адресатом получения которого не выступает государство, не может быть признан налогом. Признавать налогом любой денежный платеж, лишь постольку, поскольку он носит обязательный характер, независимо от основания возникновения этого платежа и адресата его получения, значит размывать границы категории «налог», что равносильно отказу от самой этой категории.

Artur TADEVOSYAN

Theoretical and methodological foundations of forming tax system and implementing tax policies

Key words: taxes, economic growth, tax policy

Tax as an economic and legal category has always expressed, and will express mandatory payment, first established by the state forcibly, and charged, and secondly, in favor of the state: there is no state - there can be no tax; compulsory payments are not established by the state. So, not a tax compulsory payments to the head of the tribal union, the religious community, a tribute to the neighboring, more powerful tribe, payments law, for the simple reason that they were not one-sided establishment of the state. Recognize any tax payment, in so far as it is binding, regardless of the grounds for

the emergence of this payment and the recipient receiving it, then blurs the category "tax", which is tantamount to abandonment of the search.